ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Արարատի» խմբագրութիւնը ցանկանալով ըստ կարողութեան հետաքրքիր դարձնել ամսագիրը և, որքան թերթի ծաւալը ներում է, բաւարար նիւթ տալ ընթերցանութեան համար, դիմում է հայ գրագէտներին և ուսուցիչներին խնդրելով նրանց աշխատակցութիւնը։

«Արարատում» բացի կրօնական—բարոյական յօդուածներից՝ կարևոր տեղ պիտի յատկացուի նաև մանկավարժական, գրական-բանասիրական ու պատմական յօդուածների և ուսումնասիրութիւնների։

Առաջին ուշադրութիւն պիտի դարձուի ոչ միայն մեր և օտար ազգերի եկեղեցական կեանքին, այլ և հայ կեանքին ընդհանրապէս։

Ստացած ամեն գրքի մասին մատենախօսութիւն գրել կը տրուի ձեռնհաս անձերի։

Ցանկալի է, որ ուղարկուած յօդուածները երկար շարունակելի չլինին։

Յօդուածների համար կը տրուի վարձատրութիւն կամ գրամով, կամ յօդուածների արտատպութեամբ «Արարատի» դիւքով։ Վարձատրութեան չափը կամ արտատպած օրինակների թիւը կորոշէ խմբագրութիւնը։ Եթէ յօդուածագրի կողմից որևէ ցանկութիւն չէ յայտնուած վարձատրութեան մասին, յօդուածը չի վարձատրուիլ։ Չեն վարձատրուում նաև վեց երեսից պակաս պատահական յօդուածները, ինչպէս և թղթակցութիւններն ու պատասխանները։

Խմբագրութիւնն ազատ է համարում իրեն՝ յօդուածները կրճատելու, եթէ յօդուածագիրն առաջուց պայման չէ դրել անփոփոխ տպագրելու։

Թարգմանութիւններ ուղարկելիս պէտք է յիշատակել բնագիրը (հեղինակ և լեզու) և, եթէ կարելի է, ուղարկել նաև բնագիրը, որ յետ կը դարձուի ուղարկողին։

Զատուած փոքր նիւթերը չեն վերադարձուում, իսկ մեծ յօդուածները վերադարձուում են յօդուածագիրների հաշուով։ Զատուելիք նիւթերի մասին կը յայտնուի «Արարատում»։